ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2024/107

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2024 թ. N 107

ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ *ՀՀ , ք. Երևան, Տիգրան Մեծի 38*

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության *որակի* ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024 թվականի ապրիլի 27-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՖՀՄՈՒԿ, Հիմնադրամ, Կենտրոն, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ *կարողությունների հավատարմագրման* հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 09 փետրվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 25 մայիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 16-19 հոկտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 11 հունվարի 2024 թ.
թերությունների վերացման նախնական

Ծրագրի ներկայացում՝ 15 փետրվարի 2024 թ.

«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով. **«Հետազոտություն և զարգացում»** չափանիշը գնահատվել է անբավարար:

«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի և Ֆրանսիայի Կառավարությունների միջև կնքված մշակույթի, գիտության և տեխնիկայի բնագավառներում համագործակցության համաձայնագրի շրջանակներում, ՀՀ ԿԳ նախարարության և Երևանի քաղաքապետարանի, Լիոնի քաղաքապետարանի, «Ռոն-Հայաստան-վերապատրաստում-փոխանակումներ» կազմակերպության (ՌԱՖ) և Ռոնի մասնագիտական կրթության ընկերության (ՍԵՊՌ) կողմից ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հիմնադրամն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ՄԿԾ-ներն համահունչ են հաստատության առաքելությանն ու ՈԱԾ-ին, համապատասխանում են միջազգային փորձին և արդի պահանջներին: Հիմնադրամը, սերտ համագործակցելով ՍԵՊՌ-ի հետ, գործունեության ընթացքում ուղղորդվում է ՍԵՊՌ-ի առաջավոր փորձով:

Կենտրոնի կողմից ուսումնասիրվել է Եվրոպայի ՄԿՈ ոլորտի կրթական վերջին զարգացումները և համեմատական վերլուծություններ են անկացվել Ֆրանսիայում գործող կրթական ծրագրերի հետ, արդյունքում կրթական ծրագրերը տեղայնացվել են՝ հաշվի առնելով տեղի առանձնահատկությունները: Բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում ներդրվել են ընտրովի և նախասիրական առարկաներ:

ՍԵՊՌ-ի նախաձեռնությամբ իրականացված աշխատաշուկայի ուսումնասիրությունների հիման վրա ներդվում են նոր կրթական ծրագրեր:

Մշակվել և ներդրվել է ՄԿԾ-ների մոնիթորինգի, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգ: Գործում են դասավանդման, ուսումնառության և գնահատման ուսանողակենտրոն մեթոդներ: Առկա են շարժունության հնարավորություններ և նախադեպեր: Արտադրական պրակտիկաները կազմակերպելու համար համագործակցում են գործատուների հետ:

ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության հստակ ընթացակարգ ու քաղաքականություն: Ըստ ՄԿԾ-ների սահմանված են դասախոսներին ներկայացվող պահանջներ, բացի համապատասխան մասնագիտական որակավորումից կարևորվում են մանկավարժական փորձն ու դասավանդման ժամանակակից մեթոդներին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը: Դասավանդողներից շատերը պրակտիկ-դասախոսներ են, աշխատում են մասնագիտական ոլորտներում:
Առկա են դասավանդողների կողմից մշակված ուսումնական ձեռնարկներ, որոնք կիրառվում են ուսումնական գործընթացում: Գործում են դասավանդողների գնահատման մեխանիզմներ: Սկսնակ դասավանդողների աշխատանքը կազմակերպվում է փորձառու մասնագետի՝ մենթորի ուղղորդմամբ:
Կարիքի գնահատման հիման վրա ֆրանսիացի գործընկերների կողմից իրականացվում են վերապատրաստումներ և փորձի փոխանակումներ, ծանոթացում միջազգային նորարարական նախագծերին:
ՖՀՄՈՒԿ-ն ունի ՄԿԾ-ների իրականացման համար համապատասխան ենթակառուցվածքներ, լաբորատոր բազա, որոնք մշտապես համալրվում են:
Հիմնադրամում գործում է «Ռեսուրս կենտրոն», որն ապահովում է ներքին շահակիցներին անհրաժեշտ ռեսուրսներով՝ գրականությամբ, համակարգիչներով, պլանշետներով: Լաբորատորիաները կահավորված և գերհագեցած են իրականացվող ՄԿԾ-ներին համապատասխան նորագույն սարքավորումներով: Կարիքների վերհանումը թույլ է տալիս համալրել և արդիականացնել ՄՈՒՀ-ի ռեսուրսները: Ուսումնառության ընթացքում ուսանողներին անհրաժեշտ բոլոր նյութերն ու գործիքները տրամադրում է Հիմնադրամը: Ուսանողների և դասախոսների համար ստեղծված է անվտանգ միջավայր, տրամադրվում է առողջապահական ապահովագրություն:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերն ապահավում են կայունություն և զարգացում

ՖՀՄՈՒԿ-ը կրթություն է իրականացնում ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան և սահմանել է դրանց համահունչ առաքելություն, նպատակներ և հավակնոտ տեսլական, ունի դրանք երաշխավորող ՌԾ:

ՄՈՒՀ-ի ղեկավարներն առաջնորդվում են հաստատված ռազմավարական ծրագրով, որն կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանումն ու նրանց ներգրավվածությունը ռազմավարական գործընթացներում, և հաշվետու են շահակիցներին, այդ թվում միջազգային գործընկերներին: Ներդրվել է ՌԾ մշտադիտարկման մեխանիզմ:
Ռազմավարական նպատակների իրագործման համար ունի բավարար ֆինանսական և նյութական ռեսուրսներ, աշխատանքներ է իրականացնում ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ: ՖՀՄՈՒԿ-ի կառավարման մարմիններն ու կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն իրենց հստակ կանոնակարգված գործառույթները: Յուրաքանչյուր մասնագիտության գծով նշանակվում է պատասխանատու, որը կազմակերպում է ոլորտային աշխատանքները: Պատասխանատուներն իրականացնում են նաև ՄԿԾ-ների մշտադիտարկումներ, որոնց արդյունքում ճշտգրտվում են վերջնարդյունքները:
Առկա են տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ և համակարգեր՝ պլանավորման, ինչպես նաև մշտադիտարկման նպատակով:

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովման համակարգը և դրա զարգացումը, ինչին նպաստում է եվրոպական փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը **զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը**

ՖՀՄՈՒՀ-ում առկա են ուսանողների ընտրության, ընդունելության և հավաքագրման հստակ կանոնակարգեր և մեխանիզմներ: Հիմնադրամի վարչակազմն ու դասախոսները սերտ համագործակցում են ուսանողների հետ, ինչը հանգեցնում է ուսանողների խնդիրների վերհանմանը և համապատասխան արձագանքին: Ուսանողների իրավունքների ապահովող մարմինը Ուսանողական խորհուրդն է:

ՌԾ-ում հետազոտությունը չի դիտարկվում որպես նպատակ և առաջնահերթություն, սահմանված չեն հետազոտական հավակնությունները, չունեն մշակված ռազմավարություն և քաղաքականություն: Առկա չէ հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույց կամ կանոնակարգ: Մշակված չեն հետազոտական աշխատանքների գնահատման հստակ ռուբրիկներ/չափանիշներ: Ուսանողների կողմից իրականացված աշխատանքներում բացակայում է վերլուծական բաղադրիչը և ինքնուրույնությունը: Հետազոտական բաղադրիչը դասախոսների գնահատման ժամանակ ևս հաշվի չի առնվում: Հետազոտական, ստեղծագործական միջավայր ստեղծելուն միտված քայլերը նոր են մեկնարկել: Կան որոշ միջազգային հետազոտական ծրագրերում ՄՈՒՀ-ի ընդգրկվածության փաստեր:
Հիմնադրամն իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը, ներքին շահակիցներին և հասարակությանը:
ՄՈՒՀ-ում առկա է ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության գործող քաղաքականություն, հաշվետվողականության հստակ սահմանված կարգ: Կայքէջում տեղադրված են գործող բոլոր կանոնակարգերը, ընթացակարգերը, փաստաթղթերը, հաշվետվությունները և դրանց վերլուծություններն ու ամփոփումները: Կիրառվում են սոցիալական հարթակներ: Տարբեր լեզուներով թողարկվում է «ՖՀՄՈՒԿՅԱՆ ակնարկներ» թերթը:

Միջազգայնացումը Հաստատության ՌԾ-ում սահմանվել է որպես առաջնահերթություն: Հիմնադրամը, համագործակցելով ՍԵՊՌ-ի հետ, մասնակցում է փոխանակման ծրագրերում: Հաստատության շրջանավարտներն ինտեգրվում են Հայաստանում գործող Եվրոպական ձեռնարկություններում: Հաստատությունը շրջանավարտների համար ստեղծում է հնարավորություն վերապատրաստվել Ֆրանսիայում:
Վերջին 5 տարիների ընթացքում ՄՈՒՀ-ը կնքել է համագործակցության նոր պայմանագրեր և ընդգրկվել մի շարք միջազգային կառույցների կազմերում: ՄՈՒՀ-ն ունի բավականին արմատավորված փորձառություն միջազգայնացման, արտաքին կապերի և շահակիցների հետ հետադարձ կապի ոլորտներում, ինչը հնարավորություն է ստեղծում ՄՈՒՀ-ի զարգացման և առաջխաղացման համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՖՀՄՈՒԿ-ի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Ծրագրով պլանավորված բարեփոխումները վկայում են, որ հաստատությունում կա գիտակցություն և ներուժ այդ թերությունները վերացնելու գործում, և ամենայն հավանականությամբ, կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Ֆրանս-Հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 6 /վեց/ տարի ժամկետով** :
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով

«Հետազոտություն և զարգացում» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - ՌԾ նպատակների միջանկյալ և արդյունարար հստակ գնահատման առանցքային ցուցանիշների սահմանմանը և մշտադիտարկման մեխանիզմների բարելավմանը,
   - բազմակողմանի վերլուծությունների հիման վրա տարբեր գործընթացների և փաստաթղթերի արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրմանը,
   - ռազմավարական կառավարման մեխանիզմների բարելավմանը՝ հստակեցնելով պլանավորման և գնահատման գործընթացները
   - ուսանողներին ներկայացվող վերլուծական, քննադատական, հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականների բազմազանեցմանը,
   - ներքին շահակիցների օտար լեզուների իմացության համապատասխան մակարդակի ապահովմանը:
4. ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՖՀՄՈՒԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ., ապրիլի 27
ք.Երևան